



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԱՐԳԵՊԻՍԿՈՂՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Archbishop Torkom Manougian, Primate

Առաջնորդ

Թիւ 21600

Փետրուար 14, 1969

Գերաշնորհ
Տ. Բարդէն Նպս. Վարժապետեան
Հովիւ Ս. Աստուածածին Հայց. Նկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Ուաշինկթըն.

Սիրելի Սրբազան,

Ստացած ենք 1969 Փետրուար 10 թուակիր Ձեր անդեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ Յունուար 26ին գումարուած Ձեր ժիական Ժողովին մէջ կատարուած է ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման գաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժիական Ժողովը անդի ունեցած է թեմական Կանոնադրութեան արամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք ժիական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ արուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել ժիական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան օտարի մը, ի պայծառութիւն Ս. Նկեղեցւոյդ եւ ի նոզելոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐԳԵՊԻՍԿՈՂՈՍ

Առաջնորդ

Տիարք՝ ժան Օհանեան
Հայկ Պաստէրեան
Մինաս Էէյսի Գազանճեան
Լեւոն Թերզեան
Արմէն Կարապետեան